Circulation larger than any other Armen. paper in the U. S.

Ազատութիւն

ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ չահու համար չէ որ կը հրատարակուի։

ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ տունէ տուն ու քաղաքէ քաղաք չքնելով դրամ կամ բաժանորդ չի մուրար։

ՀԱՅ ժողովրդի յառաջդիմութիւնը մեր շահն է, իսկ Հայոց ազատութիւնը ԱԶԱՏՈՒԹԻՒՆԻ նպատակն է....

Թիւ 46 — Նիւ Եորք, Հոկտեմբեր 1, 1891. — Գին տասը սենթ

ՄԵԾ ԺՈՂՈՎ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ

Ի ՔՈՒԻՔԸՐ ԻՒՆԻԷՆ

Սեպտեմբեր 3ին տեղի ունեցաւ Գաղթականական ընդհ. ժողովը յորում մեր պատուիրակն, Տ. Յ. Սարրաֆեան իւր հրաժեշտի ողջոյնն տուաւ Նիւ Եորքի և շրջակայից Հայոց։ Հակառակ անձրևոտ օդին այն երեկոյ խուռն բազմութիւն մը երկոտեռ ազգայնոց լեցուցած էր Քուփըրիւնիրընի Միթինկ Հօլ կոչուած մեծ սրահն, որոյ ճակատը գրաւնուող մեծ տախտակի մը վրայ գրուած կար մեծ տառերով «Կեցցէ Արմենիա և Հայոց Հայրենասիրական Միութիւն»։

Հանդիսականաց մէջ ներկայ էին բացի Հայերէ, որոնք հեռաւոր տեղերէ եկեր էին ողջերթ մաղթելու Վեհ. Շահի պատուիրակին, շատ մը Ամերիկացիներ և տեղական բոլոր մեծ լրագրաց ներկայացուցիչներն։

Ժամը ճիշդ 8 էր երբ ատեանը բացուեցաւ ընդ ատենապետութեամբ Տ. Օսկանեանի և ընդ նախագահութեամբ Արժ. Յովսէփ Վ. Սարաճեանի։

Հ. Էկինեան կարդաց նախորդ նստի ատենագրութիւնն և Պ. Տիօնեան կարդաց Գործադիր Յանձնախմբի տեղեկագիրն որ մանրամասնաբար կը պատմէր թէ ինչպէս Յանձնախումբն իւր ներկայացուցիչներու միջոցաւ բոլոր Հայ գաղթականութեանց հաւանութիւնն առած էր Վեհ. Շահին ղրկուելիք գրութեան համար։ Պ. Տիօնեան կարդաց նաև քաղաքիս Պարսկական հիւպատոսին, Տ. Փըրթի մէկ նամակն որով յիշեալ անձն՝ քաղաքէս դուրս գտնուելով չկրնալ ներկայ լինելուն համար այդ մեծ ժողովին ներողութիւն կը խնդրէր և միանգամայն կը գովէր Հայ գաղթականութեան այս օգտակար ձեռնարկն։ Պ. Ատենադպիրն հաշուեց նաև այն բոլոր քաղաքաց անուններն որոց Հայ գաղթականք իրենց հաճութիւնն տուած էին այս մասին։ Սոցա մէջ էր նաև Ֆիլատէլֆիա, որոյ պատասխանն առնուած ատեն ԱԶԱՏՈՒԹԻՒՆԻ անցեալ թիւը մամուլի ղրկուած ըլլալով կարդացած չէինք զայն և ոչ ծանուցանել։ Հոս հարկ է ըսել ուրեմն թէ մեր յիշեալ քաղաքի Հայոց ընկերութիւնն իւր 21րդ նիստին մէջ միաձայնութեամբ իւր ստորագրութիւնն տուած էր պատրաստուած գրութեան համար։

Գործադիր Յանձնախմբին տեղեկագրի ընթերցումէն վերջ Պ. Ատենապետն թէ Անգլիարէն և թէ Հայերէն լեզուաւ բացատրեց ժողովոյ նպատակն և ներկայացուց հանդիսականաց պատրաստուած գրութիւնն որ մագաղաթի վրայ գրուած էր նուրբ ճաշակաւ նկարուած շրջանակի մը մէջ։ Գրութեան ճակատը կերեւէր Արարատ լեռան մէկ կողմն ունենալով Ամերիկեան դրօշակն ու միւս կողմն Պարսկական զինանշանն։ Ի տես այս ճաշակաւոր գրութեան ժողովուրդն ծափահարեց և չնորհակալ եղաւ Կարգադիր Յանձնախմբին։

Հոս հարկ է յաւելուլ նաև թէ չնորհակալութեան գիրն գրուած էր Հայերէն միայն, և բաւական բաց տեղ մը ձգուած էր Պարսկերէն մասին, որն որ գրել պիտի տրուի ի Պարսկաստան Տ. Սարրաֆեանի ձեռամբ։

Յետոյ կարգն եկաւ աւուր ատենախօսներուն որոց առաջինն էր Տօքթ. Աթթարեան, որ Անգլիարէն լեզուաւ խօսեցաւ աւուր պատշաճ մի ատենախօսութիւն, իրը մէկ քառորդ ժամ։ Տ. Քիրէշճեան խօսեցաւ Տօքթ. Աթթարեանէ վերջ, որ նոյնպէս Անգլիարէն լեզուաւ բացատրեց թէ ի՞նչու համար Ամերիկայի Հայք չնորհակալ կըլլային Վեհ. Շահին։ Թէ Տօքթ. Աթթարեան և թէ Տ. Քիրէշճեան իրենց ճարտար խօսքերով գոհ ըրին ժողովուրդն, ինչպէս նաև Ամերիկացի հիւրերն։

Այս ատենախօսութիւններէ վերջ չնորհակալութեան գիրն պաշտօնապէս յանձնուեցաւ Տ. Սարրաֆեանի՝ յանուն գաղթականութեան Վեհ. Շահին մատուցանելու համար։ Տ. Պատուիրակն չնորհակալութեամբ ընդունեց զայն և համառօտ բայց զգայուն և յուզիչ խօսքերով չնորհակալ եղաւ գաղթականութեան, ու իր հրաժեշտի ողջոյնն տուաւ յարտասուս փղձկելով։ Յետոյ Հայր Սարաճեան բեմն ելաւ խօսելու համար։ Նորին Արժանապատուութիւնն յուզեալ էր յոյժ։ Նա խօսեցաւ իբր կէս ժամ և յուզեց բոլոր ներկայից սրտերն, և յետոյ ի բէմ հրաւիրելով զՊատուիրակն օրհնեց զայն ըստ սովորութեան Հայաստանեայց ուղղափառ Ս. Եկեղեցւոյն «Տէր ուղղեա՛ զձանապարհ սորա» աղօթքով։

Թէեւ կային ուրիշ խօսելու փափաք ունեցողներ այդ գիշեր, բայց ժամանակը լրացած լինելով ատեանը փակուեցաւ և ժողովուրդն որոյ թիւը 200ի մօտ էր, մեկնեցաւ այնպիսի քաղցր տպաւորութեան մը ներքեւ որոյ նմանն կրնանք ըսել թէ, տակաւին տեսնուած չէր այս քաղաքիս մէջ։

Տ. Յ. ՍԱՐՐԱՖԵԱՆԻ ՄԵԿՆԻԼՆ

Սեպտեմբերի 12ին, Շաբաթ օր, Տ. Յ. Սարրաֆեան Քունարտ շոգենաւային ընկերութեան իւրանիա շոգենաւով մեկնեցաւ քաղաքէս՝ իրեն հետ տանելով ոչ միայն գաղթականութեան չնորհակալեաց գիրն, այլ բոլոր համակրողաց սիրտն ու համակրութիւնն։ Ժամը ճիշդ 12էր, կէս աւուր, երբ Իւրանիա սուլել սկսեց։ Բարեկամք ու ազգականք, ինչպէս նաև ճամբորդի համեստ հի ամուսինն ու միակ զաւակը թաշկինակներ շարժելով ողջերթ կը մաղթէին իրեն։

Պահ մը վերջ ովկիանու մեծ ճամբորդն քալել սկսեց, և արտասուք յուղարկաւորաց աչքերէն թափթփիլ սկսեցին։ Շոգենաւն բաւական հեռացած էր երբ ասոնք մեկնեցան Ֆովափէն՝ շարունակ դիտելով հսկայ նաւն որ երկայն հետք մը ձգելով իւր ետեւէն կը հեռանար հպարտութեամբ։

ՎԻՃԱԿ ՆԵՐԿԱՅ ԿԱՅՈՒԹԵԱՆ



ԵՐԳ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

Հայե՛ր, ալ հէրիք անտարբեր մնանք,
Շուտով սթափինք, իրարու ձեռք տանք.
Վանենք մեր մէջէն շահամոլ վատը,
Որ կրնանք շահիլ Հայ ազգին դատը։

Մթին խորշերէ ազգասէրը բուսան,
Ծրագիր չինած՝ շահեր կը յուսան.
Երէկ չկային, այսօր են ծնած,
Իրենց ծնողին՝ թշնամի դարձած։

Բայց ամենքը չեն այդ վատերին պէս,
Կան տնձնուէրներ, բայց մեզ են մնտես.
Սոքա մարտին օր պիտ՝ ելնեն հանդէս,
Զուխ կէտիկի քաջ հերոսներին պէս։

Այդ հերոսներէն օրինակ առնենք,
Անձնուէր կերպով Սուրբ գործին օգնենք.
Իրենց ճիշդ շաւղին միշտ հետեւելով,
Հայոց միութեան զինուոր դրուելով։

Հայրենասիրաց Հայոց միութիւնն,
Ծրուած ուժերէ կազմեց զօրութիւն.
Հին նոր աշխարհի հեռու կողմերէն,
Արձագանք գտաւ բոլոր Հայերէն։

Այդ միութիւնն է մեր բանակ մեր յոյս,
ԱՐՄԷՆԵԱՆ անպաթ դրօշակ ամէնուս.
Վսեմ ախոյեան կանգնելով հաստատ,
Մարտի հրաւէրին կընէ մեզ պատրաստ։

Թէև չենք կարող, այժմ դաշտ երթալ՝
Հայրենեաց սիրոյն արիւն նուէր տալ.
Գոնէ մեր քրտանց արեամբ մասնակցինք,
Ներկայ պարագերնիս կատարած լինինք։

Ի զուր օտարէն չուզենք օգնութիւն,
Զի մուրալով մեզ չեն տար փրկութիւն.
Հայերուն դրամն արիւն մեր անգին,
Ազատութիւն տալ կրնայ Հայ ազգին։

Յ. Ս.

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ

ՅԱՆՁՆԱԽՄԲԻ ԽՆԴԻՐՆ ԵՒ

ՈՒՍԹԸՐԻ ՀԱՅՔ

Այս վերնագրոյն տակ «Հայք»ի խմբագիրն հետեւեալը կը հրատարակէ իւր վերջի թուոյն մէջ։

«Ուսթըրի մէջ Սեպտեմբեր 6ի Կիւրակի երեկոյին ընդհ. դումարում մի տեղի ունեցաւ նախաձեռնութեամբ հայրենասէր ազգայնոց ոմանց, ուր «Հայքի» խմբագիրն հրաւիրուեցաւ խօսիլ։ Կ. Յանձնախմբի մի ստեղծման գաղափարին հակառակող թերթերու և անհատից ոմանց թիւր մեկնութիւններն հերքելէ և առաջարկին բուն բնութիւնն պարզելէ յետոյ՝ հետեւեալ առաջարկութիւնքուէի դրուեցաւ։

Կեդր. Յանձնախմբի մի համար աշխատիլ օգտակար և կարեւոր է։

46 քուէ ի նպաստ և միայն 6 քուէ հակառակ տրուեցան սոյն առաջարկութեան։»

Այս տողերն դնելէ վերջ հարկ կը համարինք հրատարակել ստորե- մեր Ուսթըրի թղթակցին մի նամակը միեւնոյն ժողովին վերաբերեալ՝ ցոյց տալու համար թէ ճշմարտութիւնն որչափ խեղաթիւրուած է Հայքի խմբագրին կողմանէ։ Հոս անցողակի հարկ է յիշել թէ չի պիտի հրատարակէինք եթէ Հայք հաճէր լռել, զի խօսիլ ժողովի մը վրայ որ իւր նկարագրած էն շատ տարբեր արդիւնք մը տուած է։

...Խմբագիր,

Երէկ Սեպտեմբեր 6 քաղաքիս «Էքսկիւշընիստ» շէնքին մէջ տեսնելու արժանի ազգատիպ ժողով մը տեղի ունեցաւ յորում խօսելու հրաւիրուած էր Հայքը խմբագիրն մի քանի պարոններէ որք իրօք ազգային ոչ է շարժման չեն համակիր երբէք, բայց ըստ պատահման, խաթեր համար ազգասէր ալ կըլլան, յեղափոխական կըլլան, քուէ ալ կուտան։

Այս անգամ խմբագիր պարոնն ալ կերեւի թէ Վարդավառի կիւրակէին ատ գտած վատ ընդունելութենէն անհնարինս զայրացեալ և կարծելով թէ Հայր Սարաճեանի բացակայութենէն օգուտ քաղելով պիտի յաջողի ժողովրդեան մեծ բազմութիւն մը իր շուրջը հաւաքել և սրտին ամբարեալ վրէժխնդրութեան թոյնը թափել, ընդդէմ Մեծ. Տ. Փորթուգալեանի և Հայրենասիրաց միութեան և թէ իւր տիեզերական ծաղրելի ձեռնարկին ի նպաստ խաղ մը խաղալ, աճապարած է իյնալ Ուսթըր. բայց ցաւօք սրտի տեսաւ որ յոյժ խաբուած էր և իր կարծածին չափ ռամիկ և դիւրախաբ ժողովուրդ մը չէր Ուսթըրի Հայը, և կրնար կեղծ ազգասէրներն ընտրել ճըշմարիտէն և համակրիլ միայն անկեղծին։

Սոյն փորձառութիւն ունեցաւ Հայքի խմբագիրը, բայց շատ դառը պարտութեան մը և պատրանք մը կրելէ զկնի։

Ահա թէ ինչպէս։

Սեպտեմբեր 6ի երեկոյին ժողովը բացուելէ շատ առաջ Գաբրիէլեանի ժամկոչները սկսան Հայոց դռները զարնել և հրաւիրել ժողովուրդը մտիկ ընելու մեծ ազգասէրը, բայց ժողովրդեան ամենամեծ մասը այդ ազգասիրին Նիւ Եորքի մէջ երբեմն ցոյց տրուած ազգասիրական «թէ անձնասիրական վարմունքէն» շատ լաւ ճանչցած ըլլալով զինքը, և կարծես արհամարած ըլլալու համար եղած հրաւէրն, 3-400ի չափ բազմութեամբ դիմեցին Ս. Փրկիչ Եկեղեցւոյ ժողովասրահը լսել Մեծ. Պ. Գրիգորեանը որ խոստացած էր նոյն երեկոյ խօսիլ անձնապաշտպանութեան վրայ, և միայն 40-50ի չափ մեծ մասամբ ազգային ժողովներու մէջ յաճախելը մեղք համարող անձինք գնացին լսել Հայքի խմբագիրը, յորս կը գտնուէին տասէն աւելի ջերմ բարեկամներ Հայրենասիրական Միութեան, որոնք դիտմամբ ուղեցին անդ գտնուիլ որպէս զի տեսնեն թէ ինչ պիտի խօսի Հայրենասիրական Միութեան Տ. Փորթուգալեանի դէմ, և պատասխանեն ինչ որ արժան է։

Զայս գուշակելով Գաբրիէլեանը շատ զգուշաւոր գտնուեցաւ և ոչ իսկ ծանր ակնարկ մը չրաւ, կեղծաւորելով ըսաւ թէ ինքը երբէք Փորթուգալեանի դէմ չէ, և կը գնահատէ նորա ծառայութիւնները, և թէ իր նպատակն է միայն գործիչներու մէջ միութիւն մը յառաջ բերել։ Այս չորքորդ խօսքերով ուզեց ժողովուրդը խաբել և անոնց միաձայնքուէն խլել ի նպաստ իր ձեռնարկին, ուստի առաջարկեց ըսելով թէ ով որ կուզէ միութիւն թող ձեռք վերցընէ։ Իրեն համախոհք ոմանք համակերպեցան, բայց մէկ քանիները ոտքի կայնելով պատասխանեցին թէ գործիչները թէպէտ իրարմէ անջատ, սակայն ամենքն ալ միեւնոյն նպատակին կը ծառայեն և կը գործեն ու անտեղի է այդպիսի նոր միութիւն մը, և եթէ դուք ազգասէր էք կրնաք երթալ միանալ արդէն գտնուած միութեանցմէ, թէ Պ. Փորթուգալեանը ամենուս վստահելի և սիրելի է։ Ոմանք ալ այսպիսի կեղծ անձ մը լսելն ալ մեղք է ըսելով արհամարհեցին զինքը և մեկնեցան ժողովատեղիէն, որոյ վրայ այնչափ եղաւ չփոթութիւնը որ առանց ատեանը փակուելու ցրուեցաւ ժողովուրդը։ Զմոռնամ ըսել նաև որ Գաբրիէլեանը առաջարկեց նաեւ ժողովրդին բաժանորդագրուիլ իր թերթին, բայց իր մէկ երկու համախոհներէ զատ ոչ ոք մասնակցեցաւ և այսպէս խեղճը ամօթահար և ձեռնունայն մեկնեցաւ ժողովատեղիէն։ Այս տողերը գրեցի որպէս զի տեղեկութիւն ունենաս ճիշդ եղելութեան մասին, զի եթէ յանդգնի Գաբրիէլեանը փայլուն կերպով նկարագրել իր ժողովը, ինչպէս շատ կյուսպացուի իր ցուցամոլ և փառամոլ վարմունքէն, ինչ որ արժան է գրէք, զի այդ փառամոլ անձը գուցէ պարծանքի համար ըսէ թէ Ուսթըրի քուէն ալ առած է ինչպէս իր խեղճապատակէն ծնած կեդրոնական ընտրութեան։

Մնամ յարգանօք

...

1891 Սեպտ. 8
Ուսթըր

ՆԱՄԱԿ ՄԵՐ ՊԱՏՈՒԻՐԱԿԷՆ

... Խմբագիր,

Հաճեցէք հրապարակաւ իմ խորին չնորհակալիքս մատուցանել այն ամէն ազգայնոց որք թէ անձամբ և թէ նամակաւ չնորհաւորեցին իմ ծանր պաշտօնն ու քաջալեր կարդացին ինձ ամէն կողմերէ։ Թէպէտ և կը փափաքէի առանձին նամակներով պատասխանել իմ այս բոլոր բարեկամաց, բայց ժամանակի սուղ լինիլն ու մեկնելու պատրաստութեանց մէջ ըլլալս ստիպեցին զիս մեր ազատ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԻ միջոցաւ այդ պարտականութիւնը կատարել՝ խոստանալով թղթակցիլ իմ բարեկամաց հետ ճամբորդութեանս միջոցին։

Պարտ անձիս կը սեպեմ չընորհակալ լինիլ մանաւանդ Ամերիկայի Հայ գաղթականութեան որ առանց իմ անկարողութեան նայելու յանձնեց ինձ այս ծանր պաշտօնն որ ամէն ճիգ ի գործ պիտի դնեմ խղճի մտօք ի գլուխ հանել՝ կատարելով նուիրական պարտականութիւն մը որ կը ծանրանայ իմ վրայ։

Հաճեցէք, Խմբագիր, անկիւն մը չնորհել երկտողիս և միանգամայն ըսել Հայ գաղթականութեան թէ յաճախ պիտի զրկուի իրենց պատուիրակի տեղեկագրութիւններն ԱԶԱՏՈՒԹԻՒՆԻ սիւնակներուն մէջ հրատարակուելու համար։

Յ. ՍԱՐՐԱՖԵԱՆ

1891 Սեպտ. 11
Նիւ Եորք

Ազատութիւն

ԼՐԱԳԻՐ
ԱԶԳԱՅԻՆ ԻԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ·

Խմբագիր—Տնօրէն
ՀԱՅԿԱԿ Ե· ԷԿԻՆԵԱՆ·

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ամէն երկրի համար
Տարեկան Մէկ տոլար

Ո՛և է ծրար կամ գրութիւն ուղղել հեաեւեալ հասցէին
TO THE **AZADOUTIUN,**
12 Frankfort St.,
New York City, U. S. A.

Azadoutiun,
LIBERTY.

Published every month
By
Azadoutiun Publishing Company
12 Frankfort St.,
NEW YORK CITY.

H. EQUINIAN,
Editor.

SUBSCRIBTION PRICE, free of postage, $1,00 a yaer

Entered at the New York Post Office as second class mail matter.

ՆԻՒ ԵՈՐՔ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 1, 1891

«Արչք օրհասականք հզօրագոյնս կռուին ի վախճանել հնչղոյն»։

—o—

Իմաստուն բժիշկը հիւանդի մը հիւանդութիւնն քաջ գիտնալէ առաջ դեղ չի տար անոր։

—o—

Այն բժիշկը որ հիւանդ մը առողջացնելու համար այս և այն տեսակ դեղերն փորձել կսկսի՝ կեանքի հետ կատակ ընող անմիտ մ'է դատապարտութեան արժանի։

—o—

Բայց այն ինքնակոչ բժիշկներն որք այլ և այլ թունալից դեղերով հիւանդացած հայրենիք մը, կամ ողջոյն ազգ մը բուժել կը փորձեն առանց անոնց հիւանդութիւնն ճանչնալու՝ մահկանացուաց ամենէ ստորին դասերուն պատկանող ոճրագործներ են ապրելու անարժան, այդպիսեաց գոյութիւնը հիւանդ հայրենիքի մը կենաց սպառնալիքն է· իսկ անոնց համակրող, օգնող և խնայող միամիտք պէտք է որ արթնան և ըմբռնեն թէ ո՛րպիսի ծանր պատասխանատուութեան տակ կը ձգեն անձերնին՝ յանդէպս համակրելով տգէտ և ոճրագործ բժիշկներ...

—o—

Օձը այն անիծեալ սողունն է որուն հարկ չէ բնաւ դիպել։ Հասարակաց օգուտն պարտք կը դնէ ամէն անհատի վրայ սատկեցնել զայն ուր որ ալ գտնուի, վասն զի նա կը խայթէ անխնայ երբ առիթ մը ձեռք ձգէ։ Երբ այդ խորամանկ սողունն իյնայ նեղութեան մէջ՝ լեզուն դուրս հանելով պաղատիլ կսկսի խարելու համար, կան միամիտներ որք կը խաբուին ու աղատ կ'արձակեն զայն՝ առանց սակայն մտածելու թէ ատոր աղատութիւնն վտանգ մ'է ընդհանրութեան համար։ Պէտք չէ սակայն խնայել օձին նոյն իսկ անոր նեղութեան մէջ· զի օձը օձ է և չի կրնար փոխել իւր տեսակն։ Այսօր աղատ արձակած այդ սողունդ գուցէ օր մը առիթ ձեռք ձգէ քեզ քո ոտքէն խայթելու համար.... Սատկեցուր օձը առանց խնայելու...։

—o—

ՀԱՆԵԼՈՒԿ

«Հայրենասիրական զգացմանց բորբոքեալ վիճակէն օգուտ քաղելու աշխատող կեղծ ազգասէրներն լրտեսներու քով պէտք է դասուին։»

«Զարմանք չէ ուրեմն որ արտասահմանի մէջ ևս նոյն կարգի խաբեբաներ գտնուին և պարագայից յարմար կերպիւ իրենց քսակին և սնափառութեան միանգամայն սնունդ մուրան։ Ամերիկայի Հայ գաղթականութիւնն ասկէ առաջ դիտած է այսպիսեաց խղճալի յաւակնոտութիւնն հրապարակաւ խայտառակել։»

Հայք

Մենք ալ նոյնն կը վկայեմք արդարև, բայց կուզենք որ «Հայք» լուծէ սա հանելուկն թէ ո՞վ էր այդ խայտառակուող անձն, և թէ ո՞վ էր այդ կեղծ ազգասէրն որ Հայրենասիրական զգացմանց բորբոքեալ վիճակէն օգուտ քաղել ուզեց ու չի յաջողեցաւ։ Եթէ Տօքթ· Գարրիէլեան, կամ Կապրիէլ ուղիղ կերպիւ լուծէ այս հանելուկն, իւր կեանքի մէջ ամենամեծ ճշմարտութիւնն ըսած պիտի լինի անկասկած։

ՔԱՂՈՒԱԾՔ

ՀԱՅՈՑ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵՆԷՆ

«Հայոց Հայրենասիրական Միութեան Նպատակն է աշխատիլ վարչական բարենորոգումներ մտցնելու Թուրքահայաստանի մէջ, Հայ ժողովրդի տեղական պէտքերին համեմատ։ Հայ ժողովրդի ցանկութիւնն է իրաւունք ստանալ աղատօրէն ինքզինք կառավարելու որով միայն պիտի կրնան վերնալ այն հարստահարութիւններ որոնք այսօր Հայաստանի թշուառութեան և աւերակ դառնալուն պատճառ կը լինին։»

«Հայոց Հայրենասիրական Միութիւնը իւր նպատակ իրագործելու համար իւր կարողութեան չափով կը գործադրէ ամեն յարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջներին համեմատ· կաշխատի ներքին ոյժ գոյացուցանել Ազգին մէջ իւր աղատութեան համար, հրատարակութիւններ կանէ, դիմումներ կանէ որոց որ պէտք է և նիւթապէս ու բարոյապէս կը քաջալերէ անոնց որոնք անձնուիրութեամբ կաշխատին հայրենիքի աղատութեան գործին։»

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԱՆԻՇԽԱՆԱԿԱՆԱՑ ԼՐԱԳԻՐՆ

Ստացած ենք «Լա Բիվոլթ» անիշխանական լրագրի խմբագրութենէն երեք քարտիպ գրութիւններ որք կը թուի թէ լրագիր անունն կը կրեն· սոյն գրութեանց առաջինն ունի «նամակ Հայ յեղափոխականներին» վերնագիրը· երկրորդը՝ Հայ գիւղացիներուն ուղղուած նամակ մ'է, իսկ երրորդն է կաթողիկոսական ընտրութեան առթիւ գրուած բան մը։

Մենք աւելորդ կը սեպենք մանրամասնաբար քննադատել այժմ այս նոր խումբն ու անոր գրութիւններ, այլ բաւական կը սեպենք ըսել թէ Հայ ազգը դեռ չատ մանուկ է այդպիսի ծայրայեղ գաղափարներու համար։ Մեր ազգը դեռ իշխանութիւն ձեռք չի ձգած, չենք երդներ թէ խելացի բան է անիշխանականութիւն քարոզել։ Արդեօք աւելի աղէկ չէ՞ լինիր որ մեր անիշխանական հայրենակիցք լռեն այժմ և դէթ դար մը վերջ հրապարակ ելնեն...։ Մենք կը յուսանք որ այն ատեն իրենց քարոզութիւններն լսող մարդիկներ պիտի կըրնան գտնել ազգի մէջ, բայց հիմայ.... ո՛չ։

ՀԱՅ ԼՐԱԳՐԱՑ ՄԷՋ ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Մենէ չատեր մեր լրագրաց մէջ տեղի ունեցող կռիւներն ու վէճերն կարդալով կըսկսին յուսահատիլ և ազգին կորուսաը մտալուտ կարծել, առանց սակայն մտածելու թէ չի կրնար գործ մը յառաջ երթալ առանց դժուարութիւններ ունենալու, և հետեւարար առանց տեղի տալու մեծ կամ փոքր վիճաբանութեանց։ Դիտնալու է թէ կռիւ չծագիր հոն միայն ուր գաղափարաց նոյնութիւն, և միօրինակութիւն կը տիրէ, և քանի որ տարբեր տարբեր կերպիւ խորհող մարդիկ կան աշխարհի վրայ, կարելի չէ վիճաբանութեանց առաջքն առնել, և աւելորդ է ըսել թէ կարելի չէ որ գաղափարաց նոյնութիւն ըլլայ ազգի մը բոլոր անհատներուն մէջ, ուստի և վիճաբանութիւնն անհրաժեշտ է, և մանաւանդ ոչ թէ կորստեան այլ ընդհակառակն կենդանութեան և յառաջադիմութեան նշան։ Վիճաբանութիւնն գաղափարաց ընդհարումն է, ուսկէ ճշմարտութիւն կը ծագի։ Կուսակցութիւն չունեցող ազգ մը մեռած կը լինի, և երբ կուսակցութիւն կայ, կռիւ ու վէճ անպակաս են միշտ։ Եւ ո՞ւր աեսնուած է ազգ մը քաղաքակիրթ առանց վիճաբանող թերթերու և կուսակցութեանց։ Վէճն ու կռիւն հոն աւելի սաստիկ են, ուր խաւարն աւելի հեռացած է ժողովրդէն։ Եթէ լոյս չը լիներ խաւարն պիտի տիրեր աշխարհի· եթէ սեւն չդտնուեր, ճերմակի վրայ ոչ ոք պիտի կրնար գաղափար մը ունենալ, և ո՞չ ապաքէն լոյսն ու խաւարը, սեւն ու ճերմակը շարունակ կռուի մէջ են մեր աչաց առջեւ։

Վէճն ու կռիւը բնական են մարդուս համար· աշխարհս ինքնին կռիւ մ'է արդէն, իսկ կեանքը մշմանց և վէճերու ամենասաստիկն է մեր մէջ· Ինչպէ՞ս կրնայ արդարութիւն տիրել առանց կանխաւ կռուելու անիրաւութեանց դէմ։

Անցեալներն մեր միամիտ համակիրներէ մին կը գրէր մեզ Հայ լրագրաց վիճաբանութեանց մասին, և կողբաբ ըսելով թէ «ի՜նչ հարկ կայ այսչափ վէճերու· Թողունք կռիւներն և ամենքս ալ միանանք այս կամ այդ դրօշակի տակ և մեր նպատակի գործադրութեանը նայինք, առանց տեղի տալու ո՛և է վիճաբանութեան և այս կարելի է ընել եթէ մեր մէջ ազգասիրական ճշմարիտ սէր թագաւորէ»։ Արդարեւ ըստ երևոյթին խիստ իրաւացի խօսքեր կը թուին մեր թղթակցի գրածներն, բայց եթէ խորը քննենք պիտի տեսնենք դիւրութեամբ թէ անկարելիութիւն է այդ և բնականին հակառակ դլխովին, վասն զի առանց սխալն մէջտեղէն բառնալու՝ կարելի չէ սահմանն ընդարձակել ճշմարտութեան առջեւ բացող ասպարիզին։ Վանելու է անպատճառ խաւարը, կռուելու է սխալին դէմ՝ առանց իսկ խընայելու սխալը ստեղծող վատերուն՝ եթէ երբէք ատոնք մեր եղբայրներն ալ լինին, որպէս զի ճշմարտութիւնն անարգել ընթանալ կարողանայ։ Եթէ ամեն մարդ ճշմարտութիւնն ճանաչէր, եթէ ամեն մարդ օգտակարն գիտնար, և, միով բառնիւ, եթէ ամէն Հայ մէկ կերպիւ խորհէր, այն ատեն կռիւ չի պիտի պատահէր բնաւ, և քանի որ մին միւսի քարոզածն սխալ և վարդապետութիւնն վնասակար կը տեսնէ, արդարութիւն է որ բողոքէ և կռուի անոր դէմ, որպէս զի ճշմարտութիւնը երեւան ելնէ, և ժողովուրդն զայդ տեսնելով հետեւի անոր։

Հոս անցողակի յիշենք թէ վերջերս քանի մը բարեկամներ մենէ կը խնդրէին չի ծանրանալ շատ այսինչ անձի կամ անոր ուղղութեան վրայ, որպէս զի մի գուցէ անոր հացին վնաս մը հասնի, և կըստիպէին զմեզ մոռնալ այդ մարդ։ Արդարեւ ծիծաղելի առաջարկ։ Որչա՜փ անմիտ լինելու է հրապարակի մարդ մը ազգին շահը անհատի մը շահուն զոհելու համար... Արդարև մեր մէջ այրող այժմեան խնդիրն անձնականի հետ գործ մը չունի։ Կռիւը սկզբունքի կռիւ է, բայց սա մոռնալու չէ թէ այսպիսի պարագաներու մէջ երբ մէկը կորսընցնէ իւր դատ, կը վնասուի բնականաբար, և սխալ սկզբունքի դէմ, ազգային շահուն համար, կռուիլ ուխտող մէկը պէտք չէ որ այսինչին կամ այնինչին վնասած չի լինելու համար ձեռընթափ մնալ։

Թող Հայ թերթերն վիճաբանին, երբ հակառակ կարծիքներ կան· թող կուսակցութիւնք կռուին շարունակ· թող գաղափարներն ընդհարին իրարու, մինչեւ որ ճշմարտութիւնն հրապարակ ելնէ և ժողովուրդն հետեւելով անոր գործնականապէս օգտուիլ ըսկըսի։

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Նրանց տիրում էր մի աւազակ ցեղ, որի աջ ձեռքը — իր սուրն էր, որի ոտքերը — իր նժոյգն էր, որի տունը — իր թեթեւ չատրը, որի հայրենիքը — ամեն տեղ, որի հունձքը — թշուառ մարդկութիւնը, որի օրէնքը և իրաւունքը — իր կամքը, որի կեանքի նպատակը — փչրել, խորտակել և ոչնչացնել, որի գործող ոգին — իր երկաթի սիրտը, վայրենի կատաղութիւնը և գազանական յանդգնութիւնը....։

Բաֆֆի

Ցեղն ղորմէ կը ճառէ մեր մեծանուն վիպասանն այն ամբոխն որ տարիներէ ի վեր մեր քրտանց մէջ հաց, մեր արեան մէջ երջանկութիւն և մեր տառապանաց մէջ հրճուանք գըտած է անարգել։ Նա իրը իշխան միահեծան քանդեց ամեն հաստատութիւն, պղծեց ամեն սրբութիւն և բռնաբարեց Հայոց բոլոր իրաւունքներն առանց արդելքի։ Ոչ ուրիշ քրիստոնեայ ազգեր օգնութեան ձեռք կարկառեցին մեզ և ոչ ալ Հայն ինքնին փորձ մը փորձեց, մինչեւ վերջի ատենները, թօթափելու վատին այդ անարդ շղթաներ։ Ուրիշներն չի դիպացին մեզ, վասն զի օտարէն այդպիսի օգնութիւն մը յուսալն հակառակ է աշխարհի օրինաց, և չունինք այդ մասին պատճառ տրտնջալու, իսկ մենք օտարին լուծը փչրելու գաղափարն անգամ չունեցանք, վասն զի ինքնապաշտպանութեան հոգին թմրած և Հայութեան երկաթ սիրտն ու բազուկն փշրած էր, շարունակ մնալով տառապանաց և հարստահարութեանց տակ ճընշեալ, անանկ որ դեռ իրը երեք քառորդ դար առաջ, ստրուկ մը լինելու չափ համբերող և հարստահարողի անիրաւութեանց գլուխ ծռող ժողովուրդ մ'էինք Ցաճիկ կառավարութեան հպատակ։ Հանելուկ մը չէ անշուշտ թէ մեր ազգն, ուրիշ շատ մը ազգերու նման այժմ ջնջուած պիտի լինէր աշխարհիս երեսէն, եթէ ազգային Եկեղեցւոյ սէրն, Հայ սիրտը Հայ աշխարհի և Հայկական սրբութեանց հետ կապած չի լինէր ամրապինդ։ Այդ անկեղծ զգացումն կրակ մ'էր Հայի սրտին մէջ՝ մխիթարներու ներքև ծածկուած, որ առթի և պատճառի կը կարօտէր կայծ առնելով բռնկելու համար։

Երբ եկան այն ազգասէրներն որք փրկութեան ,ոերմեր ունէին սերմանելիք ազգային խոպանացած դաշտին մէջ, տեսան այն թագուն կրակն —Հայութեան կեանքը— որ մարած չէր տակաւին մոխիրներու դէղին տակ։ Այդ անխոնջ մշակք հերկել սկսեցին անպիտանացած հողն ազգային և սերմանեցին իրենց սերմերն՝ տիւ և գիշեր սպասելով անոնց լծելուն։ Եկաւ ժամանակն մեռած սերմերն կեանք առած բարձրանալ սկսեցին՝ ճիւղեր արձակելով ամէն կողմ։ Ահա այդ սերմերու մէկին արդիւնքն է այն հսկայ ծառը որուն «Հայոց Հայրենասիրական Միութիւն» անունը կուտանք, և որ Հայոց ձեռքով սերմանուած Հայոց հողի վրայ բուսած և Հայ շնչով ու հոգւով մեծցած ու զօրացած է Հայն աղատելու համար այն խուժանի ձեռքէն որոյ նկարագիրն ըրած է մեր պատմագէտ վիպասանն՝ հանրածանօթն Բաֆֆի։

Բնական է թէ երբ ծառ մը պտուղ կսկսի տալ, անոր քար նետողներ չատ կը լինին մահկանացուաց մէջ· ուստի զարմանալի չէ որ Հայոց Հայրենասիրական Միութիւնն կը քարկոծուի այսօր հեռաւոր կողմերէ, այս և այն բաղդախնդիր մահկանացուներէն։ Նոյն իսկ այս քարկոծանք կապացուցանեն թէ այդ ծառ տարածած է իւր ճիւղերն Ասիէն ց'Ամերիկա, Եւրոպայէ ց'Նոր Աշխարհ։

Թէ ինչո՞ւ համար Հայն պարտի կատարեալ յոյս և հաւատ ունենալ սա Միութեան վրայ, պիտի ջանամք ցոյց տալ սա մի քանի բառերով միայն, թէ որովհետեւ Հայրենասիրական Միութիւնն այն միակ զօրաւոր ընկերութիւնն է որ ծնած է և կապրի իւր նպատակին համար, որովհետեւ նա ծնած է, սնած է այն աշխարհի մէջ որոյ փրկութիւնն է իւր նպատակ, որովհետեւ նա կը վստահինա իւր զօրութեան և իւր բազկին ու արեան, որովհետեւ նա օտարի ջրոցն ու օդոցն սնած ու մեծցած չէ երբէք, և հետեւարար ազատ է օտարամոլութեան հիւանդութենէն որ ճարակած է ուրիշ ինքնակոչ խմբակներու մէջ։

Այս և ատոր նման բազմաթիւ պատճառներ կան որք պարտք կը դնեն ամէն ազգասէր ու անկեղծ Հայի վրայ հաւատալ Հայոց Հայրենասիրական Միութեան և այժմ ալ անոր որ երբ ժամն հնչէ նա կարողանայ փրկել այն ժողովուրդն՝

«Որոց տիրում էր մի աւազակ ձեռ, որի աջ ձեռքը—իր սուրն էր, որի ոտքերը — իր նժոյգն էր, որի տունը — իր թեթեւ չատրը, որի հայրենիքը — ամեն տեղ, որի հունձքը — թշուառ մարդկութիւնը, որի օրէնքը և իրաւունքը — իր կամքը, որի կեանքի նպատակը — փչրել, խորտակել և ոչնչացնել, որի գործող ոգին — իր երկաթի սիրտը, վայրենի կատաղութիւնը և գազանական յանդգնութիւնը....։

հունձքը — թշուառ մարդկութիւնը, որի օրէնքը և իրաւունքը — իր կամքը, որի կեանքի նպատակը — փչրել, խորտակել և ոչնչացնել, որի գործող ոգին— իր երկաթի սիրտը, վայրենի կատաղութիւնը և գազանական յանդգնութիւնը....։

ՄԱՀԱԳՈՅԺ

Կ· Պոլսոյ լրագիրք կը ծանուցանեն թէ Քրիստոսատուր Էֆ· Ղազարոսեան Օգոստոս 2ին կընքած է իւր մահկանացուն ի Կ· Պոլիս, բաց մը թողլով Պոլսոյ ազգային գործիչներու ցանկին մէջ։

Հանգուցեալն ծնած է ի Սամաթիա 78 տարի առաջ։ Իւր կրթութիւնն առած է Ս· Փրկչի Հիւանդանոցին մէջ, և աւարտելէ յետոյ իւր ուսման ընթացքն վարած է նախ դասախարակութեան և յետոյ երկար ժամանակ ազգային երեսփոխանութեան և այլ կարեւոր պաշտօններ։

Քրիստոսատուր Էֆ·ի մահուամբ ազգը կը կորսնցնէ նշանաւոր երեսփոխան մը հանգուցեալ Ս· Փափազեանի ընկերներէն։

Սեպտեմբերի 14ին Պ· Պօղոս Զանդալեան որ երկար ատենէ ի վեր անկողնոյ կը ծառայէր ի Ձէրդի Սիթի Հայթս· իւր մահկանացուն կնքեց 32 տարեկան հասակին մէջ, ի սուգ անմխիթար համակելով իւր ծերունի ծնողքն և եղբայրներն որք իրեն հետ միասին կը բնակէին յիշեալ քաղաքի մէջ 5 տարիներէ ի վեր։ Հանգուցեալը ընկի Տիգրանակերտցի էր և արհեստիւ ոսկերիչ։ Եթէ մահու մանգաղը դիթար դժբաղդ երիտասարդին, քիչ ատենէ վերջ նա պիտի ամուսնանար իւր խօսեցեալին հետ որ քիչ ատենէ յետոյ ճանապարհ պիտի ելնէր իւր հայրենիքէն Ամերիկայ դալու համար, բայց հանգուցեալին հիւանդութեան ծանրանալն սպիպեց իւր ծնողքն հեռադրել օրիորդին և արդիլել անոր ճամբորդութիւնն ժամանակի մը համար, առանց սակայն կարծելու թէ մահը պիտի բաժնէր երկու խօսեցեալն վերջնական կերպիւ։

Յաջորդ Զորեքշաբթի օր, կէս օրէ վերջ Արժ· Յ· Վ· Սարաճեան կրօնական պաշտամունք կատարեց ննջեցեալ մարմնոյն վրայ իւր բնակարանին մէջ, և քիչ վերջ դագաղակիր կառքն ճանապարհ ելաւ դէպի գերեզմանատուն տանելով իր հետ գժբաղդ Պօղոսի մարմինն, որուն կը հետեւէին 17 կառքեր Հայ յուղարկաւորներով լեցուն։ Մէկ ժամ վերջ դժբաղդ ննջեցեալն հասաւ «ի դուռն գերեզմանին» որ կը գտնուէր «Ֆըլաբը Հիլ» գերեզմանատան մէջ։ Հոս Արժ· Հայր Սարաճեան վերջի արարողութիւնը կատարելէ և գամբանական մ'ալ խօսելէ վերջ թաղումն տեղի ունեցաւ և ներկայք մեկնեցան անմխիթար՝ ծաղիկներու դէղեր թողլով պանդուխտի գերեզմանին պահապան։

Սեպտ· 19ին գաղթականութիւնս մի այլ կորուստ եւս ունեցաւ ի Գոլչճ Փոյնթ, յանձին համեստուհի տիկին Սոֆիա Քէչիչեանի որ քանի մը շաբաթէ ի վեր անկողնոյ կը ծառայէր· Սեպտ· 21ին Արժ· Յովսէփ վարդապետ Սարաճեան, որ Ուոթբրէ կոչուած էր հեռադրաւ, հասաւ ի Գոլչճ Փոյնթ թաղումն կատարելու համար։ Կէս օրի ժամը երկուքին Նորին Սրբազնութիւնն հոգեւոր պաշտօն կատարեց ննջեցեալ տան մէջ և համառօտ մխիթարական մ'ալ խօսեցաւ։ Ժամը 3ին մօտ էր երբ դագաղակիր կառքն ճամբայ ելաւ դէպի Ֆլըշինկ ուր կը գտնուէր գերեզմանատունն, նշանջեցեալն կը հետեւէին յուղարկաւորաց կառքերն որոց թիւը կը հասնէր 10ի։ Ժամը 3ը քիչ անցած էր երբ թաղումն տեղի ունեցաւ և յուղարկաւորք տրտում տխուր աունն վերադարձան։

Տիկին Սոֆիա ընկի Տիգրանակերտցի էր իրը 52 տարեկան· նա մէկ տարի առաջ Ամերիկայ եկաւ իւր ամուսնոյն ու չորս զաւակաց հետ· սոցա երկուքն՝ աղջիկ զաւակներն ամուսնացած են արդէն և կը բնակին Նիւ Եորք նահանգի մէջ։

[redacted]

Արշալոյս

ԿԻԼԻՊԷՆԿԵԱՆ ՎԱ ԱՌԱՏՈՒՆ
ՄԻ ՆՈՐ ՃԻՒՂ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

Կիլպէնկեան վաճառատունը որ Փոքր Ասիա դրեթէ ամեն քաղաքներն իր ճիւղեր տարածած և Եւրոպիոյ գլխաւոր հրապարակներն իր տուներ հաստատած լինելով, Թիւրքիա և գլխաւորապէս Փոքր Ասիա բերքերի արտահանման և հետևապէս այդ երկրի տընտեսական բարգաւաճման օժանդակող մի մեծ հարստութիւն եղած է, այժմ որոշած է Ամերիկայի մէջ ալ մի ճիւղ արձակել, և արդէն երկու շաբաթի չափ յառաջ նոյն վաճառատան կողմէն Մեծ. Տ. Կիւլապի Կիւլպէնկեան Մարսէյլէն անցնելով ուղևորեցաւ Անգլիա ճանապարհով դէպի Նիւ Եօրք, ուր պիտի հաստատուի Կիւլպէնկեան վաճառատան այս նոր ճիւղ,

Արմէնիա

ԿՈՐՍՈՒԱՆ ՀԱՑ ՄԸ

«Ը. Կարապետ Մեսրովբ Նահապետեանց 22 ամեայ մի երիտասարդ, դրեթէ 25 ամսօր յառաջ, Նոր-Զուղայից պանդխտելով Հնդկաստան, անտի Կուզեւորի յԱմերիկա՝ մի արդիւնաւոր գործոյ հանդիպելոյ յուսով. բայց թէ ո՞ր քաղաքն է գնացած արդեօք, Նո՞ր Եորք թէ այլ տեղ, այդ յայտնի չէ, քանզի թղթակցութեան դժուարութեանց պատճառաւ Պարսկաստանի վերաբերութեամբ, մեկնելոյ օրից մինչեւ ցայժմ ամենեւին նամակաց փոխանակութիւն չէ եղած, ո՛չ ներքնից առ ընտանիքն և ո՛չ ընտանիքից առ նա։

Ուստի նորա երկոքին եղբարքն Պրնյք. Յովհաննէս և Մարտիրոս Մ. Նահապետեանց կը խնդրեն որ բարեհաճիք «Արմէնիա»ի մէջ սոյն ազդարար նամակն հրատարակել, որպէս զի Ամերիկա բնակող Հայք կամ այլուր գտնուողք եթէ կը ճանաչեն կամ ունին ո և է տեղեկութիւն յիշեալ իւրեանց եղբօր մասին, բարեհաճին ազդասիրաբար գրել «Արմէնիա»ի խմբագրութեան, որպէս զի իւր անձկակրօտ ազգականք (ինքն ամուսնացած չէր տակաւին ի Ն. Զուղա). մանաւանդ եղբարք և քոյրք, միամիտ մնան, գիտնալով թէ ո՛ւր և ո՛ր քաղաքի մէջ կը գտնուի նա և ի՛նչ գործով և պաշտօնով կը պարապի։»

Արմէնիա

ՀԱՑՐԵՆԻՔ

Ես կը յիշեմ քս անցեալն յիշատակ,
Քաղցր Հայրենիք դու դեռ չեղած աւերակ,
Դրախտ էիր վայր Եդեմայ բուրաստան,
Փառքերով լի Հայրենիքս Հայաստան.
Հիմայ դարձար դու աւերակ վըշտահար,
Մննդ ավայրս նուիրական ուխտավայր
Անգութ բաղդը խլեց քեզմէ փառքերդ
Հիմնայատակ ըրաւ քո սուրբ վանքերդ.

Երբ կը տեսնեմ Արարատն ու մեծ Մասիս,
Գերի դարձած իմ սիրելի Հայրենիքս.
Աւերակաց տակ ծածկուած մեր Սիւնիք,
Կողբամ դքեզ, իմ սիրելի Հայրենիք։

Բաւ է մնաս սև աւերակ, Հայրենիք.
Վատահ եղիր սիտ՝ սրաշտապեն
Քեզ երկինք
Ժողուէ շուրջդ քո զաւակներ ցիր ու ցան,
Կանգնէ արկանդ քո քաղաքներն արուարձան,
Հերիք լուծէ ծանր հղթայդ դարեւոր,
Ուրախացուր Արարատդ սգաւոր.
Թող տեսնան քեզ քո զաւակներն երջանիկ.
Վերականգնիր, ո՛վ պաշտելի Հայրենիք։

Ա. ՍԱՍՈՒՆ

ԱՇՐԳ ՇԻՐԻՆ

Աշրգ Շիրին, այն ժողովրդական ծանօթ բանաստեղծն, որոյ երգերէն մաս մը հրատարակած ենք Մասիս շաբաթաթերթի մէջ իբր չորս տարիներ առաջ, 1750 թուականին ծաղկած է Տիգրանակերտի մէջ և գրած է բազմաթիւ բանաստեղծութիւններ թէ Հայերէն և թէ Ցաճկերէն լեզուաւ։ Այս երգերէն մաս մը ցայսօր կերգուի յիշեալ քաղաքի և շրջակայից ժողովրդեան մէջ, և մաս մը կորսուած է բնականաբար։ Իսկ Թուրքերէն երգերէն մեծ մաս մը գողցուած ու թուրք բանաստեղծներու անուան տակ հրատարակուած է ի Կ. Պոլիս, թէեւ Հայ բանաստեղծի հանճարը, գաղափարներն ու հմայիչ դարձուածքներն պիտի բողոքեն յաւիտեան անամոթ բանագողներու դէմ։ Լրագրոյս խմբագիրն Շիրինի և ուրիշ հին բանաստեղծներու երգերէն քանի մը երկոտասանեակներ ժամանակին հաւաքած լինելով՝ մաս առ մաս պիտի սկսի հրատարակել զայնս Ազգ.ՏՈՒԹԻՒՆի մէջ իբր նմոյշ նախնեաց հետաքրքրական գործոց, որք հրատարակուած չեն կամ անկատար կերպիւ հրատարակուած են ուրիշ հաւաքիչներու կողմանէ այլ և այլ ժամանակ։

Ի սորեւ կը դնենք այսօր մեր Սամթեցի Աշրգին «Սիրահարական երգ»երէ մին որոյ 4 տուներն միայն Տ. Ե. Մ. Տնտեսեան հրատարակած է իւր երգարանին մէջ՝ «Բառախաղ» վերնագրին տակ առանց սակայն յիշելու հեղինակին անունն որ ի հարկէ ծանօթ չէ եղեր իրեն։

ԵՐԳ ՍԻՐԱՀԱՐԻՆ

Ազուոր լուս երեսըդ խելքըս առեր է,
Քեզի համար կ'ըլամ Լ. Ա. ու Ց.
Կը տեսնես քաշածըս է՞ր չես կըսկըծար,
Գիշեր ցերեկ աչքս է՝ Թ և Ա ու Ց։

Քեզի ուր որ տեսնեմ, գիտեմ, կու ճանչեմ,
Այն ատեն ետեւէդ ալ կու հառաչեմ.
Լալական եմ եղեր, կուլամ, կաղաչեմ,
Ողորմէ՛, սա դուռդ Բ և Ա ու Ց։

Թըշնամին մօտիկ՝ ինէ հեռացար,
Խօսք մը տուեր էիր, խօսքէդ ալ դարձար.
Դու. իմ երախտիքը ի՞նչպէս մոռացար։
Որ կերար իմ ձեռքէս չատ ՀԱ ու Ց։

Բրածիդ պէս գըտնես, հալեցուցիր զիս,
Այսչափ աղաչեցի՝ դու չեկար խօսքիս.
Մէյ մ'ալ այսուհետեւ մի՛ կենար աչքիս,
Դ և Ի դի Մ, և Ա ու Ց,

Աստուծու խշմին գաս, չի տեսնաս արեւ,
Թափին սեւ մաղերդ զերթ չորցած տերեւ.
Եթէ չի գաս խօսքիս, չի տաս ինձ բարեւ,
Ամէն առտու, չը՞նես ինձ Ա Ց և Ց։

Աշրգ Շիրին

ՓԱԼԻՖՕՐՆԻԱՅԷ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷ ՄԸ ՔԱՂՈՒԱԾ • 1891 Սեպ. 21։

«Իմ փորձառութիւնս զիս համոզած է որ մեր խեղճ ազգին համար շահաւոր Փալիֆօրնիայէ ուրիշ նահանգ մը չկայ, թէ որ երիտասարդները քիչ մը ստակով աս նահանգը գան, այդ կողմը կենալէն տասը անգամ աւելի իրենց համար շահաւոր պիտի ըլլայ։

Ֆրէզնոյի երկրին գիները այժմ բարձր ըլլալուն մեր երիտասարդները կարող չեն հոն երկիր գնել. ատկէ զատ մեր Հայերու իրարմէ բաժնուելով այլ և այլ տեղեր ցրուիլը իրենց յառաջդիմութեանը համար խիստ օգտակար է։

Եթէ Հայերն թէ Ֆրէզնօ և թէ ուրիշ տեղեր, միայն մէկտեղ խառնուին յառաջդիմութիւն բնաւ չեն ունենար։ Հայերը Փալիֆօրնիայի ուրիշ կողմերը աւելի շուտով կրնան յաջողիլ քան թէ Ֆրէզնոյի մէջ, թէպէտեւ Ֆրէզնօ չատ յառաջ կերթայ կոր։ Այժմ 3 երկաթուղի կայ հոս որոնց 2ը չինուած է եւ կրանի, իսկ միւսը կշինուի, նաեւ նոր ընկերութիւն մը կազմուած է ուրիշ երկաթուղի մ'ալ շինելու համար։»

ԲՈՂՈՔ ՈՒՍԹԸՐԷՆ

... Խմբագիր,

«Հայքի» Մեծ. խմբագիրն. իւր Թերթի 16րդ. Թուոյ մէջ, «Հայեր յԱմերիկայ» կամ «Ուսթըրի Հայոց վիճակը» խորագրոյն ներքեւ մի խմբագրական յօդուած գրած էր, յորում ինչ ինչ հարեւանցի և ենթադրական տեղեկութիւններ տալէ զկնի, տեղւոյս Հայոց վիճակը այնպիսի ին նկարագրած էր՝ որպէս թէ միշտ կ'հարստահարուին, կ'ծաղրուին, կ'հրուին, կ'ծեծուին Իրլանտացիներէն, ինչպէս Տաճկաստանի յոռեգոյն փողոցներուն մէջ Տաճիկներէն, և որպէս թէ կառավարութիւնն և կառավարութեան պաշտօնեայք երբէք կարեւորութիւն չեն ընծայեր Հայոց կրած այսպիսի զրկանաց, հետեւարար և յանցաւորք անպատիժ կը մնան, և այս ամենը տեղի կունենան որովհետեւ Ուսթըրի Հայք արհամարհելի եղած են յաչս Ամերիկացւոց, որովհետեւ լեզուագէտք և կարող ազդայինք անտարբեր են և չեն պաշտպաներ էղեր իրենց ազգակիցները, և հետեւցնելով կ'խրատէ ու կըսէ «պէտք է գիտնալ թէ Եկեղեցի չինելու համար ստակ տալ կամ հաւաքել և ազգասիրութեան վրայ հանապազ խօսիլ ու քարոզել չէ միայն ազգասիրութիւն, ազգասիրութիւն է նաեւ ակար ու տղէտ եղբայրն պաշտպանելն օրինաւոր միջոցներով»։ և իւր յիշած հարստահարութեանց իբր մի զօրաւոր ապացոյց մէջ կ'բերէ երիտասարդի մը պատմած դէպքերէն մին, որ կատարուած է ներկայ տարւոյս Օգոստ. 8ին, բայց թէ որչափ խեղաթիւրեալ ներկայացուած է դէպքն ցոյց տալու համար կը դնենք ատ բուն իրողութիւնն զոր ստուգելու հետաքրքրութիւնն ունեցայ։

Անհաւասիկ. Մէյն փողոցը կեդրոնական փողոցն է, ուր օրն ի բուն և մինչև կէս գիշեր խուռն բազմութիւն մը կերթեւեկէ, մանաւանդ Շաբաթ և Կիրակի օրերն, Օգոստ. 3, Շաբաթ գիշեր, Աւետիս Խանցեան իր ընկերներով պատրաստի ելած է անդ և պատահած են քանի մը արբեալ Իրլանտացիներու, որոց մին սիկառ մը ուզած է Աւետիսէն և չստանալով հայհոյած է սովորական «.....» բառով, Աւետիս պատասխանած է. ասոր վրայ Իրլանտացին բռնցի կ'զարնէ Աւետիսին քթին որ կարունի, ընկերներէն Ստեփան Դաւթեան հարուած մը կուտայ Իրլանտացու ընկերներէն միոյն և կը ձգէ զայն գետին. այս միջոցին բազմութիւնը կ'խռնի և Հայերը ետ կ'քաշուին ու միւսները կ'փախչին, ապա ոստիկանք կ'հասնին, բայց Հայերը չեն կրնար գիտնալ թէ ոյք էին չարագործք, և ոստիկանք տեսնելով որ մեծ վնաս մը չէ պատահածն և տեղեկութիւն մ'ալ չեն կրնար առնել, կ'հեռանան։ Այս է ահա իրողութիւնն որոյ տեղեկութիւնն պղտոր աղբիւրէ մը բղխած ըլլալուն այնչափ չափազանցեալ էր։

Այս առթիւ արդարութեան և երախտագիտութեան պարտք մը կատարած ըլլալու համար, կ'փութամ յաւելուլ թէ կառավարութիւնը ամեն ատեն և ամեն պարագայի մէջ պաշտպանած է Հայերը և անխտիր գործադրած է արդարութիւնը զորս ատ մի առ մի յիշելը աւելորդ կ'նկատեմ, եւ թէ տեղական լրագիրք այս օրինակ դէպքեր պատահած ատեն միշտ Հայոց կողմը խօսած և պաշտպանած են և վկայած են թէ Հայք անվնաս և հանդարտիկ ժողովուրդ մ'են եթէ իրենց դպչող մը չլինի, և Ամերիկեան ժողովրդեան պատուաւոր դասը միշտ համակիր աչօք նայած է Հայոց վրայ, թէ լեզուագէտ և կարող ազգայինք ոչ միայն եկեղեցւոյ դրամ հաւաքելու կամ տալու մէջ են ազգասէր այլ ամեն պարագայի մէջ նախանձախնդիր եղած և պաշտպանած են իրենց ազգակիցները, գատապարտել տալով իրենց Իրլանտացի գործաւոր դաս ոսոխները, որոց թշնամութիւնը լոկ հացի խնդիրէ յառաջ եկած է, թէ վերջապէս Ուսթըրի Հայք Նիւ Եօրքի «Հայք»ին յորդորանաց և խրատուց հրապարակ գալէն շատ յառաջ գիտցած են պաշտպանել իրենց անձերը և իրենց ազգակիցները, պատսպարել և խնամել նորեկ և կարօտ հայրենակիցներն ամիսներով, հայրենիք ճամբել իրենց անկարացեալ ընկերները, հոգալ իրենց ննջեցելոց յուղարկաւորութեան ծախքերը, քաջալերել հայրենասէր գործիչները, վերջապէս գործով և ոչ խօսքով ազգասիրութիւն գործել ամեն առթիւ, զոր լռել և չ'յայտնել ուրացութիւն և ապերախտութիւն է պարզապէս։

Խնդրելով որ հաճիք Ձեր թերթին մէջ մի անկիւն շնորհել ներկայիս։

Ս. Կ. ՇԱՂԱԼԵԱՆ

1891 Օգոստ. 26
Ուսթըր

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ Ց'ԱՐԱԲԿԵՐ

Մեզ կը գրեն Թուրքիէն.

Ստոյգ աղբիւրներէ կը տեղեկանամք թէ, դարձեալ այս օրերս կառավարութիւնը Արաբկերէն 3-4 Հայեր ձերբակալած՝ Խարբերդ բերել տալով բանտարկած է, որպէս թէ դոքա եղած լինին Փոլիս Եուսուֆը սպաննողները, մինչդեռ ասոնք բանէ մը տեղեկութիւն չունենալէ զկնի, պարկեշտ, և ընտանեաց ու զաւակաց տէր մարդիկ են։ Սոքա հազիւ հազ մեծ դժուարութեամբ կարող կը լինէին իրենց օրական պարէնը ճարելու, ահա խեղճերն կ'ստիպուին սև գործ պարտութեան մը զոհ երթալ, նոքա ամեն ճիգ ի գործ դնելէ վերջ, կը հարկադրուին իրենց կենաց ազատութեան համար բոլոր տան մէջ ունեցած կահ կարասիքնին ևս ծախել, յուսալով թէ՝ կարող պիտի լինին ազատիլ. այլ աւա՜ղ որ, ամեն բան ծախուելէ և ընտանիքնին հետին ծայր խեղճութեան ու թշուառութեան մէջ ձգուելէ յետոյ, իբր մարդասպան վճիռ կը տրուի նոցա. որպիսի օրէնք, և որպիսի արդարութի՛ւն.... երբ ազգն սոցա ընտանեաց թշուառութեան վերայ կողբար, նոյն պահուն, դարձեալ ուրիշ մի դէպք ևս կը պատահի Արաբկերի մէջ. որպէս թէ, Հայկական Ազատութիւն անունով մի ընկերութիւն կազմուած է, և սոցա հեղինակներն են իբր թէ տեղւոյն առաջնորդ Գերեզնիկ սրբազանը, Տէր Ներսէս քհյն. Հայոց Ուսումնարանի Ա. դասատու Շմաւոն էֆ. Յովհաննէսեանը և ժամագործ Յակոբ աղան։

Վալիին հրահանգաց համեմատ երեկոյ մը տեղւոյն խայտխամը ժամագործ Յակոբ աղան իւր տունը հրաւիրելով, առանց ո և է բան մը ըսելու, կը ձերբակալէ, և ձեռքերը ու ոտքերը չղթայի զարնելով, 12 ոստիկաններով ի միասին, նոյն գիշեր կը խաւրէ Խարբերդ վալիին։

Գալով Ուսումնարանի Ա. դասատու Շմաւոն էֆ. Յովհաննէսեանի, որ նոյն դէպքէն մի քանի օր առաջ, 4-5 ընկերներով Պարսկաստան ուղեւորելու համար ճամբայ ելած էր, Զմշկածակի մօտ Տիեսպի կոչուած քիւրթ պէյի տունը գիշերը անցուցած պահուն, յիշեալ քիւրթ պէյէ կողոպտուելէ և իւր վրայ ունեցած 60 ոսկւոյ չափ գումարն առնուելէ վերջ, նոցա ևս ձեռքերնին ու ոտքերնին կապուելով կը տարուին Խարբերդ։

— Զգոյշ եղիր, պարոն գործարանապետ, այդ անձ զարմանալի խաբեբայ մ'է, ըսաւ Իրլանտացի մը իր գործատիրոջ որ նորէկ գործաւորի մը հետ կը խօսէր անցեալ օր։

— Ի՞նչու, ի՞նչ կայ, Յակոբոս, հարցուց գործարանատէրն, ի՞նչ ըրած ունի քեզ այս մարդը։

— Ի՞նչ ըրած ունի ինձ։ Պատմեմ քեզ. ասկէ տարի մ'առաջ ինձ տասը տոլար փոխ տուաւ այդ մարդն, և վերջէն ամէն միդ ի գործ դրաւ զայն ինէ ետ առնելու համար։ Զգոյշ եղիր որ քեզ ալ չի խաբէ ամբարիշտը։

—o—

Զի գիտցած բանիդ վրայ երբ ստիպեն քեզ խօսիլ, այդ մասին անգէտ լինելդ խոստովանելով միայն բաւականացիր։

—o—

Օրիորդ Ա. — Ձեր ամուսինն Քրիստոսի գործին համար քարոզելու գնացած էր Հարաւայիններու մէջ, բազդաւոր գտնուե՞ցաւ։

Տիկին Բ. — Այո՛, շատ բազդաւոր, զի ողջ առողջ կրցաւ տուն վերադառնալ։

—o—

Տիկին Կէյ — Քու բնութիւնդ շատ փոխուած է մեր ամուսնանալէն վերջ, սիրելիս. առաջ մինչեւ կէս գիշեր ինձ հետ կը մնայիր, իսկ հիմայ կէս գիշերէն առաջ տուն չես գար երբէք։

Պ. Կէյ — Իմ ժամերս ճիշդ նոյնն են, տիկինս, միայն թէ սա է տարբերութիւնն որ առաջ մայրս կը տրտնջար, իսկ հիմայ դու։

—o—

Արբեալ երկու անձեր անցեալներն վէճի բռնուած էին. սոցա մին կը պնդէր թէ երկինք երթալու ճամբան գերեզմանն է, իսկ միւսն կը հակառակէր պնդելով թէ յարութիւն առնել հարկ էր երկինք երթալու համար. սոքա չի կրնալով համաձայնիլ, իմաստուն գիներեալի մը գնացին որ լուծէ իրենց խնդիրն։

—Երկուքդ ալ սխալ էք, ըսաւ գիներեալն, տակաւին երկինք երթալու ճամբան գտնուած չէ, բայց յոյս կայ որ քիչ ատենէն պիտի գտնուի։

—Որն է այդ ճամբան հարցուց արբեալներէն մին։

Այդ ճամբան աշխարհիս երկու բեւեռներն են, ուսկէ միայն կարելի է վեր մագլցիլ և ասոր համար է որ մարդիկ բեւեռները գտնելու կերթան՝ մահը աչքի առջև առնելով։

Արբեալները գոհ մնացին այս վճռէն և շնորհակալ ըրին գիներեալն՝ նորանոր խունկեր ծխելով նորա վաճառած բագոսին։

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Բանգուն Ս. Մ. — Ձեր խնդրած Ազ.ՏՈՒԹԻՒՆի թիւերը սպառած են. ուրիշ երկու տետրակ ուղարկած ենք ձեզ։ Մանտափոստ ընդունած չենք տակաւին։

Թէհրան Կ. Ս. — Ստացանք ձեր նամակն. ձեր բաժանորդագիրն կրնաք վճարել Տ. Ց. Սարրաֆեանի որ իբր պատուիրակ Հայոց գաղթականութեանս ձեր կողմերն կուգայ քիչ ժամանակէն։

Տամիաթ Ա. Տ. Ց. — Ձեր վերջի նամակն հասած է մեզ, բայց մանտափոսթն ոչ։

ՆԱԽՆԵԱՑ ԱՌԱԿՆԵՐ
Ամթեցի Վարդան երէցէ գրուած

—o—

Էշ մի էր ի Մսրա աշխարհի որ ունէր բարձր. ձայն եւ ելաւ ի լեառն մի եւ ձենէր եւ ասէր թէ, խիստ բժիշկ եմ, եւ ամեն ցաւոց դեղ ունիմ։

Ծողովեցան մարդիք եւ ելան ի լեառն եւ տեսին զտեսն նորա, զի էր քոսոտ եւ զաղիր, թքաւից արարին եւ քարկոծ։ Ասեն ցնա, ո՛վ պիղծ, երբ դու բժիշկ ես, պանին եւ ամոթալի արարին։ Ցուցանէ պարտ է նախ զինք սրբելի մեղաց, ապա այլոց քարոզել. զգերան հանել պիտի յականէն եւ ապա ասել ընդ եղբարս բեր որ հանեմ զչեղն յականէ քումմէ, որպէս ասաց Քրիստոս. բժիշկ, բժշկեա զանձն քո։ Բժիշկ ամենայն մեղաց, Քրիստոս, բժշկեա զմեզաւոր Վարդան երէցս։

—o—

Գայլումն Աւետարան կարդային թէ պաղխր է ոչխար եւ խոզ մի խեղդել, եւ ասէ գայլն, արտորա եւ չուտ կարդայ, ահա գառն անցաւ ընդ սարն։ Ցուցանէ որ, այսպէս են որդիք մարդկան, որք ոչ խրատու լսեն եւ ոչ Աւետարանին. այլ միտքն նոցա չարութիւն է, եւ ի յափշտակութիւն. որպէս գայլն զայն։

(Շարունակելի)

Հայ Երիտասարդաց Թանգարանի Միութեան Խնամակալութիւնը պատիւ ունի շնորհակալութեամբ հրատարակութեան տալ իրեն եղած հետեւեալ նուիրատուութիւններն,

Եօնքրսէն Միութեան Գործակալ Տ. Կարապետ Սոպաճեանէ «Պատերազմ ընդդէմ եսութեան» մէկ օրինակ «Թիւ գր. 88», «Ճաշակ արդի Հայ մատենագրութեան» Պիպերճեան մէկ օրինակ «87», մէկ օր. Ազատութիւն Պուլղարիոյ Թիւթիւնճեան էֆ. մէկ օր. Հայ բողոքականութեան անցեալն ու ապագան։

Ֆիլատէլֆիայէն Հայոց Հայր. Միութեան Օժանդակ օթեակին Ատենապետ Տ. Էֆէնտիանէ մէկ օր. Գրիչ և Սուր «Մինաս Չէրազ» «Թիւ գր. 89», մէկ օր. Սաղմոս Իսրայէլի Մ. Փորթուգալեանի։

Ֆիլատէլֆիայէն Ա. Արմենակ Թօփրահանեանէ մէկ օր. Լսարան, «Եգիպտոսի հնութիւնները» Այվազովսքի Գաբրիէլ. Եպս.

Զուիցերիայէն Հնչակի խմբագրութենէն մէկ օր. ներկայ տարւոյ հրատարակեալ Հնչակի ամբողջ թիւերը, «Ցունվարէն մինչև Օգոստ.»։

Ի հաշիւ Թանգարանին ստացուած են նաեւ հետեւեալ հրատարակութիւնները,

1 օր.	Արմէնիա	Գ. տարի	Մ. Փ.	92
1 »	»	Դ. »	» »	93
2 »	»	Ե. »	» »	94-95
2 »	»	Զ. »	» »	96-97
1 »	Խաչագողի Ցիշատակները,			
1 օր.	Ղարարաղի Աստղ. Բաթֆի			
1 »	Ոսկի Աքաղաղ	»		
2 »	Թորոս Լեւոնի Մերենց			85-86
1 »	Վակների ճանապարհորդութիւնն ի Հայաստան,			87։

Կը փութամք յաւելուլ թէ վերոյգրեալք շրջաբերութեան դրուած լինելով, ցանկացողք թող փութան դիմել իրենց Պատ. Գործակալաց և կամ Թանգարանապետին եթէ իրենց տեղ չունին որոշեալ գործակալ։

Այն ամէն անձինք որոնք կը ցանկան իրենց յաւերժական մի յիշատակը թողուլ Թանգարանիս մէջ, նորա մի որ և իցէ գիրք նուիրելով, առիթն է որ ընտրեն վերոյգրեալ գրքերէն մին կամ մէկ քանին, և վճարելով նոցա գներն արձանագրել տան զայս իրենց յիշատակին։ Գիներու մասին դիմել առ Թանգարանապետն։

Ի դիմաց Խնամակալութեան
Պ. ԹՈՐՈՍԵԱՆ
Թանգարանապետ

ՆԱՄԱԿ ԿԱԼԻՖՕՐՆԻԱՅԷ

Ութը տարիներ առաջ Մարսէլիան ու Եօգոսթէն 8—10 տընտոր Հայեր եկան Ֆրէզնօ, որոնք արհեստաւորներ էին և հողագործութեան վրայով չատ քիչ գիտէին և անձամբ այդ գործերու մոտ չէին։ Լեզու չէին գիտեր ոմանք դրամ ունէին բայց չատերը չունէին, և քանին ալ պարտքով եկած էին, բայց իրենց յոյսը մեծ էր թէ «Աւետեաց երկիրը» կերթան և պտղոյ ու հանգոյց բարիքը պիտի վայելեն։ Ընդհակառակն գտան զիրենք տարագիր, անկոս, անկար և անօգնական զղջացին, լացին և պատրաստուեցան ետ դառնալ և բընաւ աղէկ չխորհեցան իրենց գլրող և Ֆրէզնօյի վրայօք տեղեկութիւն տուող բարեկամներուն վրայ։ Մենք չատ սիրով, գթալով և իրենց ցաւակից լինելով յորդորեցինք զիրենք որ համբերեն և թերեւս իրենց աղէկ լինի։ Թէ սիրոյ յորդորները և թէ իրենց պարագաները արգիլեցին զիրենք, բայց ի մտոյ մինչ աչքերնին բայուեցան, գիտցան երկիրը, գիտցան գործերը և իրենց թէ խելքը, թէ դրամը և թէ աշխատանքը գործածելով, այսօր անոնց բոլորն ալ անկախ դիրքերու և փայլուն յոյսերու մէջ են։ Ստոյգ է թէ ութը տարի առաջ պատեհութիւնները չատ էին ու դիւրին, բայց բնակիչ ու գործ քիչ էր և արտաբերութիւնն ալ քիչ ու դժուարածախ։ ուստի համբերութեամբ իրենց կենայ մարտն յանդգնութեամբ յառաջ տարին և հիմայ յաղթած են դժուարութեանց։

Անոնցմէ վերջ եկողները գտան պատեհութիւնն անցած աղքատին համար, սակայն իրենց ջանքը ու յառաջադիմութեան նախանձը աւելցուցին ու կերթան նախորդ գաղթական համազգաց ետեւէն այն յոյսով որ օր մը հասնին անոնց յոյս կայ որ յաջողին։

Ֆրէզնօ այգեգործութեան կեդրոն մ'է և ունի մէկ քանի չամչի գործարաններ, ուր այգեկութի ամիսներ ոմանք 3—4 ամիս կը բանին, նաև կներ ու աղջկունք քանի մը ամիսներ կը գործեն օրական մէկուկէս ու երբեմն երկու տոլար առնելով, կան նաև այգիներ ցօտելու, հերկելու և ընդ. գործեր, որք ամէն տարի 6 ամիս հազիւ կը գործեն և այդ գործով կապրին գիւրութեամբ։ Կան Հայ արհեստաւորներ, 4—5 կրպակ գերեզակ, 4 ժամագործ, 1 գրական վաշխառու և պղտավաճառներ, որոնք գոհ են իրենց արհեստէն եթէ ուրիշ արհեստաւորներ գան թերեւս ասոնց հասնին։ Կայ նաև մէկ Հայ կոշկակար և մէկ հիւսն, բայց տեղւոյս վստահելի գործ ներկային այգեգործութիւնն է, և եթէ մէկը ունի 1000 1500 տոլար կրնայ մը չակուած 20 է քր այգի մը առնել և գնոյն մէկ չորրորդը վճարելով տարուէ տարի այգիին բերքէն երջանիկ ապրուստ մը հանել 2000—4000 տոլար արժողայգի մը հինգ հարիւրէն հազար հինգ հարիւրտոլար եկամուտ կրնայ տալ եթէ աղէկ խնամք տարուի։ Գալով այգիի մշակութեան, դժուար գործ մը չէ, եթէ այգիին տէրը անկարող է ինք գործել կրնայ ուրիշին մշակել տալ մէկ էյքրի համար տոլար 6-8 վճարելով։ Ֆրէզնօ ունի աւելի աղէկ ապագայ, քան թէ Արեւելեան ոևէ մէկ քաղաքը։ Բարոյապէս ալ առաւելութիւններ ունի։

Հոս Հայեր համեստ ընտանիքներէ կը բաղկանան և իրենց բարի ազդեցութեան կը խոնարհի անվորձ երիտասարդն, թէև ցաւալին երբեմն կ'ելլայ։ Եթէ Հայերը լինէին Իտալիացւոց և Գերմանացւոց նման հաստատակամ, անվեհեր ու տոկուն ժողովուրդ մը, ես պիտի ըսէի թող գան Ֆրէզնօ, բայց ընդհակառակն են։ Շատ զգուշութեամբ կը վարուինք այդ փափուկ խնդրոյն մէջ իրենց հետ և յայտնապէս պատասխանատուութիւնը իրենց վրայ կուզենք թողուլ և Հայերուն նեղուելուն ու տրտնջալուն չեմ կըրնար դիմանալ, ուստի կը խնդրեմ զիրենք որ գործերնին և տեղերնին չձգեն լաւագոյն գործ գտնելու յոյսով։ Եթէ կրնան իրենց տեղը յարատեւ գործ գտնել թող հոս մնան և ստակ շահին, մանաւանդ անոնք որ հայրենիք դառնալու յոյս ունին, հոս գալու չեն։ Օրերս Ֆրէզնօյի համար մէկ քանի ընտանիքներ ճամբայ ելած են։ Այս տարւոյ նոր ամուսնացողները և թէ նոր գալողները տասը ընտանիքներ կաւելցնեն Ֆրէզնօյի մէջ։ Զերդ

....

1891 Օգոստոս 23
Ֆրէզնօ

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ
ՀԱՅՐԵՆԱՍԻՐ- ՄԻՈՒԹԵԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԱՏՈՒԹԵԱՆ
Բ. Տպագրութիւն

«Հայոց Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետարանի մէջ համառօտ կերպով բացատրուած է թէ իւրաքանչիւր հայրենասէր Հայ ի՞նչ փափաքներ պէտք է ունենայ և ի՞նչ պարտքեր ունի կատարելու։

Կը խնդրուի ամէն հայրենասէր Հայերէ իրենց շրջանի մէջ տարածել այս տետրակ։ Մէկ անգամէն յիսուն օրինակ ծախու առնողին կը զրկուի 5 Ֆրանքով։ Հատին գինն է 15 սանթիմ։

ՆՄՈՅՇՆԵՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ
Գրած ոտանաւորներէն

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իբրեւ նմոյշներ զանազան քաղաքների մէջ և զանազան տպաւորութիւնների տակ իւր երբեմն գրած ոտանաւորներին որոնք ժամանակին հրատարակուած չը լինելով կորսուած են այժմ։ Այն մի քանի ոտանաւորներ որոնք իրրեւ նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին Կ. Պոլիս տպագրուած ազգային երգարաններին մէջ՝ որոյ վերտին տպագրութիւնն վաղուց արդէն արգիլուած է և «Ասիա» և «Արմենիա» լրագիրներին մէջ։ Նմոյշների մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաև թէ այդ ոտանաւոր ի՞նչ տպաւորութիւնների տակ ներշնչուելով գրուած են։ Գին 15 սանթիմ։

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

Կ. Պոլսոյ Հայոց կեանքէն առնուած մի իրական վէպ

ԳՐԵՑ ԱՊԼ ՂԱՐԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անրարոյական մի հայր իւր ապականուած վարք ու բարքով որչա՞փ չարիքներուի պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով սպաննուած և անհետացած է աշխարհէ։ Գին 1 Ֆրանգ։

Ցիշեալ գրքոյկներէն ստանալ փափաքողք պարտին դիմել ԱՐՄԷՆԻԱԻ խմբագրութեան հետեւեալ հասցէիւ

Redaction du journal Armenian
ARMENIENNE
Marseille, France.

ԸՆՏԻՐ ՀԱՅԿԱԶՈՒՆԷ

Երկրորդ տպագրութիւն յաւելեալ եւ ճոխացեալ եւ զարդարեալ ընտիր պատկերօք

Գրքոյկս կը բաղկանայ մօտ 16 մեծադիր թերթերէ։ տպագրութիւնը նորաձոյլ տառերով և ընտիր թղթի վերայ է։ 27 նոր գեղեցիկ և նուրբ փորագրութեամբ պատկերներ՝ կը զարդարեն գրքուկիս էջերը, որք կը յիշեցնեն և կը զարթուցանեն Հայ մանկըտւոյ սրտից և երակաց մէջ ազգութեան ոգին և եռանդը, և կը յորդորեն զիրենք նմանիլ իրենց Հարց։

Բաժանորդագրութեան գինն է 4 Ֆրանք՝ կանխիկ վճարելի։ տպուած թերթերն առանձին առանձին կ'ուղարկուին իւրաքանչիւր Բաժանորդագրաց։ Այն անձինք՝ որք 15 օրինակէ աւելի կ'առնուն մի անգամով, և կամ Դպրոցներ՝ որք կուզեն իրենց համար զանազան օրինակք՝ նոցա յատուկ և զգալի զեղչ կը շնորհուի։ Բաժանորդագրութեան դրրուիլ ցանկացողք դիմեն հետեւեալ հասցէիւ։

DIRECTION
DE L'IMPRIMERIE ARMENIENNE
Venise. St. Lazare

Ա. Զ Դ

Ի նպաստ Հայ Երիտասարդաց Թանգարանի Միութեան կը ծախուին։

1. Բաֆֆի վերի պատկերին խոշորագիրը, տասնըմէկ ու կէս մատնաչափ երկայն, և ութը մատնաչափ լայն։ գին տասը սէնթ։

Դուռմ Գափուի հերոսներու պատկերները։

2. Յարութիւն Զուլգուլեան
3. Կէմ ալմաղ Մանուկ։

Երկուքը 5 սէնթի

Գնել փափաքողներէ պարտին դիմել Միութեանս Թանգարանապետին կամ Նորա Գործակալաց, և կամ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ լրագրի խմբագրատունը։

Փոստի ծախքը մեր վրայ է։

Պետրոս Թորոսեան
Թանգարանապետ
779 Երկրորդ Ավենիւ
Նիւ Եորք

---

87 Թիւ Սէնտ Ընթրիթ Պրուքլին, կամուրջի մօտ, օգտաւէտ տեսարանով տան մը մէջ, առաւօտեան նախաճաշով և երեկոյեան ճաշով, հայ ընտանիքի մը քով գիշերօթիկ մէկը կուզուի։ Շաբաթական վճար 5 տոլար։

Ա. Զ Դ

Հայ Երիտասարդաց Թանգարանի Միութեան Խնամակալութիւնն պատիւ ունի ծանուցանել թէ ի դիւրութիւն ընթերցասէր հասարակութեան հետեւեալ գործակալութիւններն հաստատուած են Նիւ Եորքի, շրջակայից եւ այլ քաղաքներու մէջ։

Տ. Թ. Պասմաճեան,
Նիւ Եորք 779 Երկ. Ավ.
Տ. Յ. Աղատեան, Նիւ Եորք.
432 Ուէսթ 56րդ Փողոց
Տ. Գ. Պուղտանեան,
1496 Լէքսըն Ավ. Նիւ Եորք,
Տ. Մ. Շիլէմանեան,
91 Մատիսըն Փողոց, Նիւ Եորք
Տ. Յ. Համալեան,
Ն. Ե. 43 Սանտ Փղոց. Պրուքլին
Տ. Յ. Պասմաճեան,
Քոլէճ Փոյնթ, Լ. Ա.
Տ. Կ. Զանգալեան,
455 Փալասիա Ավ. Ճէրզի Սիթի Հայթս, Ն. Ճ.
Տ. Պ. Տէյրմանճեան,
313 Ուէսթ Ընդրիթ, Ուէսթ Հոպոքըն Ն. Ճ.
Տ. Յ. Զուլֆեան,
Փաթրսըն, Ն. Ճ.
Տ. Յ. Թոփրահանեան,
Ֆիլատէլֆիա, Փէնս.
Տ. Յակոբ Թոփրահանեան,
Մալպրո և Թըրնրվիլ, Քոնն.
Տ. Տ. Խոհարարեան,
Փրովիտէնս, Ր. Ա.
Տ. Կ. Սօպաճեան,
Եոնքըրս, Ն. Ե.

Open day and night.

Eguinnn Binding & Mailing Co.

12 Frankfort Street,
NEW YORK.

Open day and night.

ԴՈՆԿՄՊՈ ՎԱՃԱՌ

F. SCHAUB,

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԶԱՓԱԻՈՐ ԳՆԵՐՈՎ ԵՒ ԽՈՍ ԳՈՒՇԱՑՈՒՑԻՉ։ ՀԱՑՈՑ ՀԻՆ ԲԱՐԵԿԱՄՆ ՈՒ ԺԱՄԱԳՈՐԾԸ։

431 Palisade Avenue,
JERSEY CITY H'G,T'S, N. J.

ԾԱՆՈՒՑՈՒՄ։

Այն ամէն Հայերն որք կը փափաքին դրամ ղրկել իրենց բարեկամաց ի Թուրքիա կամ ի Ցունաստան, Զէք Պանք դրամատան փոխանակագիրներն պիտի դանեն ամենասպահով, ամենաժան եւ լաւագոյն։

MATHEWS & CO.,
BANKERS.
No. 2 Wall St. New York

Andrew Scott, John May,

Scott & May,

Illustrated and Plain Newspaper,
BOOK & JOB
PRINTERS,
PRESS ROOMS:
15 Spruce St., NEW YORK.
Pressess Runing Day & Night.

CONEY ISLAND,
BRIGHTON BEACH,
WEST BRIGHTON BEACH.

From Foot of Whoitehall st.,

Առաւօտեան ժամը 7. 10էն մինչև 10. 10 ամէն կէս ժամը անգամ մը նաև կը մեկնի Լիկեալ նաւամատոյցէն. յետոյ ամէն մէկ ժամը անգամ մը նաև կը մեկնի առաւօտեան ժամը 10. 40էն մինչև 9. 10 երեկոյ։ Գնացքն վերջի նաւը կը մեկնի 10.28ին երեկոյեան։ Երթեւեկութեան գին 40 սենթ.

ԻՐԱՒՈՒՆՔ ԿԱՆՈՒՆՔ ԵՒ ԿԱՑՈՒՑՄՈՒՆՔ

ԴԻՒՑԱԶՈՒՆ ԼՈՒՍԱԿԻՆ "ԱՌՕՐԵԱ" ՄԵԾ ՇԵՆՔԻՆ ԿԻՑԸ

12

ԿԿՕ 'ՑՍՆՍՓ
ԹՅՕՓԺՊՈՅՓ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՊՈՍԿԻՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԼՍՆԻ ԳՈՀԱՑՈՒՑԻՉ ՊԱՏՈՒՄԱՆՆԵՐՈՎ։

Ո ԵՒ Է ԴԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ Ա-ՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԻՐՔ ՈՒ ՏԵՏՐԵՐ ԿԸ ԿԱՉՄՈՒՆԻ։

ԻՐԱՒՈՒՆՔ ԿԱՆՈՒՆՔ ԵՒ ԿԱՑՈՒՑՄՈՒՆՔ

Արշալոյս
ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՅԺՄ ԱՄԻՍԸ ՄԷԿ ԱՆԳԱՄ ՄԻԱՅՆ

Տարեկան բաժանորդագինն մէկ տոլար մ'է վայն,

ԿԱՄ ԵՐԵՔ ՕՐԸ ՄԷԿ ՍԷՆԹ.

Ամէն մէկ թուի մէջ խմբագրական յօդուածներ, թղթակցութիւններ, զուարճալիք և այլ կարեւոր յօդուածներ։

Արշալոյս

ARMENIA
an
ANGLO FRENCH JOURNAL
Political & Literary

Published on 1st & 16th of every month.

Editor: Minasse Tcheraz,

Ex-Armenian Delegate at the Berlin Congress.

Address: 28 Bedfore Place,
London, W. C. Eng.

I. A. ISAACS,

Տպագրչաց եւ կազմարարաց վերաբերեալ մեքենաներ.

36 & 39 Beekman St.,
Նիւ Եորք.

Ծան.-Երբ կը գնէք մի մուռանաք ըսել թէ ծանուցումն ԱԶԱՏՈՒԹԻՒՆԻ մէջ տեսաք։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ.

ԿՍԿԾԱՆՔ
Գրեց
Հ. ԷԿԻՆԵԱՆ։

Հեղինակին ընտիր մէկ բանաստեղծութիւնն է այս արձակ գրուած, որ կը վաճառուի խբմբագրութեանս քով հատը 15 Սէնթի սիայն։

ԼՈՅՍ ԵՒ ԽԱՒԱՐ
Գրեց
ՊԱՏ. Կ. ԲԱՐԱԿԵԱՆ

Կը վաճառուի Նիւ Եորքի մէջ խմբագրութեանս, իսկ յիւսթը հեղինակին քով, հատը քսան եւ հինգ Սէնթի։

ԱՐՄԷՆԻԱ

ԱԶԱՏԱԿԱՆ ԿԻՍԱՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՂԱՓԱԿԱՆ, ԵՒՆ. ԵՒՆ.

Վեցերորդ տարի։

Տարեկան բաժանորդագինն է չորս տոլար. Հասցէն.

Redaction du journal „Armenia",
Marseille, France

ԲԱԶՄԱՎԷՊ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ
Ամսաթերթ
ԽԹ. Տարի, 1891։

Տարեկան բաժանորդագինն է տասը Ֆր. (4 Բուբլի). Հասցէն՝

Redaction de la revue "Basmavep",
Venise, Italie, St.

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՑ
ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ։
Ե. Տարի 1891։

Տարեկան բաժանորդագինն է 10 Ֆր. (4 Բուբլի.)։ Հասցէն՝

Redaction de la Revue "Hantess",
Vienne, (Autriche).
VII Mechitaristengasse, 4.

ԱՐՄԷՆԻԱ.
Հունգարերէն Ամսաթերթ։
ՊԱՏՄԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ։
Բ. Տարի. 1891
Տարեկան բաժանորդագինն է 10 Ֆր. Հասցէն՝

Szongott Kristoff urnak,
Szamosujvar (Hongrie).

ՀՈՄԷՔԻ ԼԷ
ՊԱՆԷՔՆՕՕ ՔԷՄԱՓԷՆԻ
ԹՈՐԻՊԻՒՆ ՊԻԼՏԻՆԳԻՆ ՄԷՋ,
ԿԻՒ-ԵՈՐՔ